ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » մարտի 2023թ. № 47-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-105-0011-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՉԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նելլիկ Սարգսյանի լիազորված անձ Արթուր Սարգսյանի դիմումը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, թիվ 2023AZZP7G ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը՝ կազմված 13.01.2023 թ.-ին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/1/1757/02/22 գործի վճիռը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, և 360-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի 06-105-0011-0004 ծածկագրում գտնվող 0. 210710 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա. Լոռի Բերդ համայնքի ՈՒռուտ գյուղի 06-105-0011-0004 ծածկագրի հողամասի մակերեսը 0. 210710 հա,

բ. հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ հավելվածի

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0. 210710 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Նելլիկ Պատվականի Սարգսյանին և մինչև 15. 05. 2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Լոռի Բերդ համայնքի ՈՒռուտ գյուղի 06-105-0011-0004 ծածկագրում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1955 թ. կառուցված՝ բնակելի տան 68,93 քմ մակերեսով, 1955 թ. կառուցված՝ բնակելի տան 73,91 քմ մակերեսով, 1955թ. կառուցված աստիճանահարթակ 8,61 քմ մակերեսով, 1989թ. կառուցված՝ 28,00 քմ անասնաշենքի նկատմամբ ճանաչել Նելլիկ Պատվականի Սարգսյանի /անձ. AT 0499490, տրված 15. 06. 2020թ, 053-ի կողմից/ սեփականության իրավունքը:

4. Հողամասում առկա է՝ 2005 թ-ին ինքնակամ կառուցված 12,39քմ անասնաշենք:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2023թ. մարտի 15
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2023թվականի N 48 – Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Էդվարդ Մելսիկի Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 1236261 վկայականը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրում գտնվող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի»» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 30.11.2022թ. թիվ 2022XBQMES ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 30.10.2022թ. կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝

Որոշում եմ.

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող Էդվարդ Մկրտչյան Մելսիկի. Արմենուհի Ֆրիդայի Մուրդյան, Արման Էդվարդի Մկրտչյանի համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-101-0052-0018 ծածկագրի տակ գտնվող 0.1224 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 84.34 քմ մակերեսով բնակելի տան կիսանկուղը, 14.72 քմ մակերեսով բաց

պատշգամբը, 3.95 քմ մակերեսով աստիճանավանդակը, 85.42 քմ մակերեսով բնակելի տունը, 21.17 քմ մակերեսով բաց պատշգամբը, 27.62 քմ մակերեսով մանսարդը, 1.13 քմ մակերեսով աստիճանավանդակը, 30.0 քմ մակերեսով ծածկի, 5.23 քմ մակերեսով անասնագոմը:

2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 84.34 քմ մակերեսով բնակելի տան համար 38460/երեսունութ հազար չորս հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, 14.72 քմ մակերեսով բաց պատշգամբի համար 6720/վեց հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ, 3.95 քմ մակերեսով աստիճանավանդակի համար՝ 1800/մեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, 85,42 քմ մակերեսով բնակելի տան համար՝ 38950/երեսունութ հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, 21.17 քմ մակերեսով բաց պատշգամբի համար 9660/ինը հազար վեց հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, 27.62 քմ մակերեսով մանսարդի համար 12600/տասերկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, 1.13 քմ մակերեսով աստիճանավանդակի համար 520/հինգ հարյուր քսան/ ՀՀ դրամ, 30.0 քմ մակերեսով ծածկի համար 13680/տասերեք հազար վեց հարյուր ութանասուն/ ՀՀ դրամ, 5.23 քմ անասնագոմ համար, 2390/երկու հազար երեք հարյուր իննսուն/ ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 124780 /մեկ հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր ութանասուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

3. 06-101-0052-0018 կադաստրային ծածկագրի 0,1224 հա հողամասին և հողամասում առկա շինություններին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Սվերդլով, 1-ին փողոց, 8/1 Բնակելի տուն:

4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2023թ. մարտի 15

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » մարտի 2023թ. № 49-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0051-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-ն որոշմամբ, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 13-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով Վահե Վռամի Ջիլավյանի կողմից լիազորված անձ Լաուրա Սերյոժայի Վարդանյանի(անձնագիր՝ AR0657280 տրված 11.04.2018թ. 053-ի կողմից)ներկայացված դիմումը՝ Ագարակ գյուղի 06-009-0051-0064 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, ճշտված մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառույցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, N0119080 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված 24.08.2022թ. թիվ 2022KBKKUH ծածկագրով հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 22.08.2022թ. կազմված ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, տեղագրական հատակագիծը և եզրակացությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունը կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0051-0064 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Վահե Վռամի Ջիլավյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

Առուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և հողամասի մակերեսի չափը՝ 0.25031 հա համաձայն՝ «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի:

2. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0051-0064 կադաստրային ծածկագի 0.25031 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Վահե Վռամի Ջիլավյանի սեփականության իրավունքը:

3. Օրինականացնել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ. Ագարակ 06-009-0051-0064 կադաստրային ծածկագրով, Վահե Վռամի Ջիլավյանին սեփականության իրավունքով պատկանող 0.25031 հա մակերեսով հողամասում՝ 2015թ. ինքնակամ կառուցված համաձայն հատակագծի թիվ 1 բնակելի տունը 69.0 քմ մակերեսով և բնակելի տան բաց պատշգամբը 2.1քմ մակերեսով, թիվ 4, 5, 6 պարիսպները՝ ընդհանուր 2.82 քմ մակերեսով:

4. Համայնքի բյուջե վճարել՝ 71.1 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան և բաց պատշգամբի համար 44870.0 (քառասուն չորս հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ 2.82 քմ ընդհանուր մակերեսով պարիսպներ 1800.0 (մեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շենք, շինությունների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 46670.0(քառասունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որը վճարվում է Լոռի Բերդ համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:

5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից 23.08.2023թ. տրամադրված տեղեկանքի թիվ 0119080 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պետական գրանցում ստացած թիվ 1և 3 շինությունների նկատմամբ փոփոխություններ չեն իրականացվել:

7. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք, գյուղ Ագարակ, 8-րդ փողոց, թիվ 14 բնակելի տուն:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2023թ. մարտի 17
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » մարտի 2023թ. № 50-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 15 -Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 15-ի «ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 23-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին և 2-րդ կետերի մեջ գրված «Արիեստանոցի» բառը փոխարինել «Պահեստի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2023թ. մարտի 17
գ. Լոռի Բերդ